ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Վ. Լ.ՈՒՆԿԵՎԻՉ.—«ՊՍՏԻԿ Է, ԲԱՑՑ ՉՍՏԻԿ Է»։ Մրջիւնների կեանքից հետազօտութիւն։ 46 երես, տառ № 12. Թիֆլիս, տպարան «Արօր». 1890 թ. գինը 5 կոպէկ։

Տգիտութիւնը ոչ միայն մի ժողովրդի մտաւոր ու բարոյական զարգացման խոչնդոտն է, պահպանելով սնապաշտութիւն ու երկիւղը, այլ նոյն իսկ մեծ մասամբ նաև ժողովրդի նիւթական վատ դրութեան պատճառը։ Ամենամեծ գործոնը տգիտութեան դէմ մաքառելու՝ մասսայի մէջ բնութեան մասին ճիշդ գիտելիքներ տարածելն է։ Ուրեմն հասկանալի է որքան օգտակար են բնագիտական գրքոյկները ժողովրդական և մանկական ընթերցանութեան համար։

Մասնաւորելով խօսքը զանազան կենդանիների սովորութիւնների ու կենցաղի մասին հետաքրքրական ու պարզ լեզուով գրած պատմութիւնների նկատմամբ, կարելի է նաև աւելացնել, որ բացի սխալ կարծիքներ փարատելուց և աշխարհայեցողութիւնը լայնացնելուց՝ նոքա մեծապէս նպաստում են, մանաւանդ մանուկ ընթերցողների մէջ, գիտողութեան ու դիտաստութեան զարգանալուն։ Երեխաները դէպի նոյն իսկ օգտակար կենդանիները չատ անգամ անգութ են լինում և տանջել, չարչարելը նոցա, կարծես, մի առանձին զուարճութիւն է պատճառում. բայց հետաքրքրական պատմութիւնները կենդանիների կենցաղի ու սովորութիւնների մասին՝ զարթեցնելով համակրանք և սէր դէպի այդ անբան արարածները՝ մեղմացնում են և արդարացի դարձնում երեխաներ։՝ն։

Պր. Լունկեւիչի գրքոյկը գոհացնում է այն բոլոր պահանջներին որ դրւում են ժողովրդական—մանկական ընթերցանութեան համար գրած գրքերին։ Նա գրւած է պարզ ու հետաքրքրական ձևով և թարգմանած լաւ, կենդանի լեզուով։ Սակայն չի կարելի չը նկատել մի քանի աննշան թերութիւններ հրատարակչի կողմից։ Օրինակ. «Պստիկ է բայց չստիկ է» հետազօտութիւն չէ, այլ ուրիշի հետազօտութիւնների ու դիտողութիւնների (Լերբոկ, Ֆիւրեր, Ֆոխա, Դարւին և այլն) վերայ հիմնւած պատմւածք. Արարները սնա-

մորթ» ցեղին չեն պատկանում, ինչպէս Նեգրները (եր. 12)։ Մի տեղ տպագրական սխալը մութ է թողնում նոյն իսկ միտքը. «Ամենից առաջ դա ք կը նկատէք թեւոր որձերի, էգերի և անթիւ (պէտք է լինէր անթև) բանւորների տարբերութիւնը» (երես 9)։ Մեզ թւում է որ «մեղրաքաղի» և բանւոր մրջիւնի մասին գրածը այնքան էլ պարզ չէ հասարակ ընթերցողի համար և որ մի քանի տարբերկրեայ մրջիւնների մասին պատմելիս՝ պէտք էր յիշել այն երկրի անունը, որտեղ պատահում են նոքա։

Առհասարակ պ. Լունկեւիչը ցոյց է տալիս այս գրքոյկում տաղանդ հետաքրքրական և դիւրամատչելի կերպով գրել ժողովրդի ընթերցանութեան համար բնական գիտութիւններից, ուստի ցանկալի է տեսնել չարունակութիւն այնանման գրքերի։

Լ. Ս.

ՆՈՐ ՍՏԱՑՒԱԾ ԳՐՔԵՐ

1) «ՊՌՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ».—*Բզզէ, վէպ։ Արտատպած «Մուրճ» ամսագրից։ Թիֆլիս, տպ. Ռօտեանցի,* 1890, *թ. գինն է* 1 *ր.* 20 *կոպ.։*

2) «ՍՄԱՅԼՍ, ՍԱՄՈՒԷԼ»՝ *Թարգմանութեամբ Փիլիպպոս Վարդանեանցի.—Ինքնօգնութիւն։ Թիֆլիս, տպ. Յով. Մարտիրոսեանցի,* 1890, *թ. գինն է* 1 *ր.* 50 *կոպ.։*

3) «ՂԱԶԱՐԵԱՆՑ, ՑԱԿ.».—*Գիւլէ՝ Մի արկած քիւրդերի կեանքից։ Հրատարակ. «Աղբ. և Տարազ» պատ. հանդէսների։ Թիֆլիս, տպ. Նազարեանի.* 1890, *թ. գինն է* 20 *կոպ.։*

4) «ՁՄՇԿԵԱՆ, ՄԱԿԱՐ».—*Ծոցի օրացոյց,* 1891 *թ. համար Թիֆլիս,* 1890, *տպ. Ռօտինեանցի. գինն է* 15 *կոպ.։*

5) «ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.».—*Թոփալ (Թիւրքահայերի կեանքից), տպ. «Արօր» Նազարեանցի,* 1890, *թ. գինն է* 5 *կոպ.։*

6) «ՇԱԻԱՐՇ.».—*Պատկերներ կեանքից։ Շուշի, տպ. Շուշու հայոց հոգ. տեսչութեան, գինն է* 50 *կոպ.։*

7) ԼԵՌՆԵՆՑ.—*Բանաստեղծութիւններ. Ս. Պետերբուրգ, տպ. Սկորոխոդովի, գինն է* 60 *կոպ.։*